ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի դասախոսությունը Երեւանի պետական համալսարանում Սոցիոլոգիայի համաշխարհային կոնգրեսի կազմակերպած «Հայաստան. հայացք անցյալից» թեմայով «Կլոր սեղանի» շրջանակում

Շաբաթ, 13-ը **հունիսի** 2009**թ.**

«Կլոր սեղանի» թեմային անդրադառնալուց առաջ մենք պետք է ձեւավորենք հիմնախնդիրների շրջանակը՝ օրակարգը եւ համարձակություն ունենանք ներկայացնելու մեր գոյաբանությունը, աշխարհընկալման մեր հիմնարար մոտեցումները: Եվ եթե ունկնդրի համար հասկանալի դառնա, թե մենք ինչպես ենք ընկալում ժամանակակից աշխարհը, ապա դրանով իսկ ավելի դյուրին կլինի արծարծել Հայաստանի Հանրապետության առջեւ ծառացած խնդիրները:

Եվ այսպես, որո՞նք են ժամանակակից աշխարհի հինգ կարեւորագույն հատկանիշները: **Առաջինը** փոփոխությունների արագությունն է, որը փոխում է մեր կյանքը որակապես, մենք չենք հասցնում հետեւել այդ փոփոխություններին, չենք հասցնում բացահայտել դրանց տրամաբանությունը, որովհետեւ այդ փոփոխությունները ոչ միայն քանակական են, այլեւ որակական: Եվ մենք՝ ձեզ հետ միասին, պետք է սովորենք ապրել արագ փոփոխվող աշխարհում եւ մտապահենք այդ գործոնը: **Երկրորդն** այն է, որ մենք ապրում ենք արագ փոքրացող աշխարհում, երբ փոխազդեցություններն էապես ուժգնանում են: Աշխարհը դառնում է փոքր, եւ այսօր, օրինակ, Բրազիլիայի հայկական համայնքն այնքան հեռու չէ մեզանից, որքան հեռու էր 1960 թվականին: Այսօր մենք մեզ վրա զգում ենք համաշխարհային բոլոր ազդեցությունները, որոնք չէին զգացվում 15-20 տարի առաջ: **Երրորդ** կարեւորագույն գործընթացը՝ արդի աշխարհի հիմնարար եւ հենքային գործընթացը, մտագործունեությունն է: Եթե ինդուստրիալ հասարակության հենքային գործընթացը ապրանքների եւ ծառայությունների մատուցումն էր, ապա ժամանակակից հիմնարար միտումը, աշխարհի զարգացման հենքային գործընթացն արդեն գիտելիքի արտադրությունն է: Արդի աշխարհի ամենակարեւոր արդյունքը մեր գիտելիքն է: **Չորրորդ** հատկանիշն այն է, որ գիտելիք կրող անհատն ինքը դառնում է առավել կարեւոր ինտելեկտուալ ռեսուրս ստեղծողն ու կրողը: Եվ այդ անհատի ամենակարեւոր ձգտումը դառնում է ինքնաիրացումը, իր կարողության եւ հնարավորության գործադրումը: Դա է մտածող մարդու ամենակարեւոր ձգտումը: Եվ եթե մենք ուզում ենք ունենալ տաղանդավոր մարդիկ, պետք է համապատասխան միջավայր ստեղծենք նրանց համար, որպեսզի նրանք կարողանան ինքնադրսեւորվել: Եվ այս պայմաններում **հինգերերորդ** կարեւոր խնդիրն է դառնում ազգային մշակութային ֆենոմենի հիմնահարցը՝ արագ փոփոխվող, արագ փոքրացող աշխարհում ինչ ապագա ունի ազգայինը: Ամեն շաբաթ երկրագնդի վրա մահանում է մեկ լեզու, այսինքն՝ կենդանի լեզվից վերածվում է մեռած լեզվի: Դրա պատճառն

այն է, որ աշխարհը փոքրանում է, աշխարհի սուբյեկտներն այլեւս պետությունները չեն, այլ դառնում են քաղաքակրթությունները։ Այս հանգամանքը, ինքնության պահպանման հանգամանքը դառնում է 21-րդ դարի կարեւորագույն խնդիրը։

Այժմ այս գոյաբանական հենքերի հիման վրա ձեզ հետ միասին փորձենք ձեւավորել Հայաստանի Հանրապետության օրակարգային հարցերը, որոնք մենք պետք է կարողանանք լուծել։ Դրանք ես կբաժանեմ երկու խմբի։ **Առաջին** խումբը կազմում են այն հարցերը, որոնք գտնվում են հասարակության ուշադրության կենտրոնում, որոնց շուրջ կան բազմաթիվ քննարկումներ եւ որոնց լուծումը շատ բան է բացահայտելու։ Նախ բացահայտելու է, թե ինչ կերպ է մտածում հայ հասարակությունը, ովքեր են մեր հասարակության սոցիալական դերակատարները կամ սոցիալական դերասանները (ինձ դուր եկավ մեր ֆրանսիացի գործընկերոջ այս ձեւակերպումը)։ Դերասան են՝ եթե սոցիալական հարթության մեջ են եւ իրենց դերը լավ են կատարում, սիրված են ժողովրդից եւ կարողանում են առաջնորդել նրան, ձեւավորում են հանրային կարծիք, որը գերիշխում է եւ ստեղծում համապատասխան միջավայր։

Հայաստանի Հանրապետության օրակարգի կարեւորությամբ առաջինը Լեռնային Ղարաբաղի հարցն է. ինչպես է այն լուծվելու, որն է դրա փիլիսոփայությունը, մեծ հաշվով մենք պետք է կարողանանք համաձայնության գալ, նաեւ այն խնդրում, թե 21-րդ դարում ինչ բան է արդարությունը։ Ընդհանրապես, քաղաքակրթություններն իրարից տարբերվում են արդարության ընկալմամբ։ Հենքային ձեւով այս հարցին պատասխանելը եւ ինչպես մեզ, այնպես էլ աշխարհին ներկայացնելը, թե որն է արդարության մեր ընկալումը ԼՂՀ հիմնախնդրի լուծման գործում, փորձաքար է մեզ համար։ Մեզ մտահոգող երկրորդ խնդիրը Հայաստան-Թուրքիա հարաբերությունն է, որովհետեւ այն նույնպես առնչվում է հայ ժողովրդի աշխարհընկալմանը։ Սրան զուգընթաց օրակարգում է ցեղասպանության եւ դրա հանդեպ մեր վերաբերմունքի հարցը։ Հաջորդը Հայկական աշխարհի խնդիրն է։ Հանկարծ մենք մեզ համար պարզեցինք, որ մենք ձեզ հետ միասին ապրում ենք ոչ թե Հայաստանի Հանրապետությունում, ոչ թե Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, այլ Հայկական աշխարհում, որովհետեւ մի օր մեր դուռը բախեց այդ իրողությունը եւ մեզ համար դարձավ ակնհայտ։ Հայկական աշխարհ ասելով նկատի ունենք, որ այդ աշխարհն ստեղծող սուբյեկտների միջեւ ձեւավորվել են այնպիսի հարաբերություններ, որոնք էական նշանակություն ունեն մեր գործունեության բոլոր ոլորտների համար։ Եվ այս փոքրացող աշխարհն այդ երեւույթն ստեղծեց կամ ավելի ակնառու դարձրեց, այնպես, որ մենք այլեւս չենք կարող չնկատել, որ մենք ապրում եւ աշխատում ենք Հայկական աշխարհում։ Շատերն այս բանը դեռ չեն գիտակցում, բայց իրողություն է։ Այն առաջին հերթին բացահայտվեց Կենտրոնական բանկի համար, որովհետեւ ֆինանսական ծրագրեր մշակելիս դրամատունը հաշվի է առնում փողի առաջարկը եւ պահանջարկը, այսինքն՝ դրանց միջոցով որոշում, թե ինչքան փող է

անհրաժեշտ Հայաստանի Հանրապետությանը։ Եվ ԿԲ-ն մի օր պարզեց, որ այլեւս իր ֆինանսական գործառույթները միայն ՀՀ-ում տեղի չեն ունենում, որովհետեւ Լոս Անջելեսի, Ռուսաստանի հայերը, որոնց թիվն ավելի մեծ է, քան ՀՀ բնակչության թիվը, Երեւանը համարում են իրենց տնտեսական շահերի կենտրոնը։ Եվ անկախ այն բանից, թե որտեղ են ապրում, նրանք միլիարդավոր դոլարներ են ուղարկում Հայաստան, միլիարդավոր դոլարներ ստանում Հայաստանից եւ իրականացնում միջազգային ֆինանսական գործառույթներ։ Եվ որոշելու համար, թե դոլարային եւ դրամային ֆինանսական ինչ զանգվածի հետ գործ ունի, ԿԲ-ն ստիպված սկսեց ուսումնասիրել Լոս Անջելեսի եւ Ռուսաստանի հայկական տնտեսական ներուժը, առանց որի գնահատման մենք չէինք կարողանա որոշել, թե որքան փող է հարկավոր տպել։ Այսպիսով, մենք դուրս եկանք ՀՀ սահմաններից եւ հայտնվեցինք Հայկական աշխարհում։ Հետագայում այն ներխուժեց քաղաքական դաշտ, սկսեց ազդել մեր քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային եւ այլ որոշումների վրա։ Այս առումով մենք ունենք շատ լուրջ խնդիր՝ արդյո՞ք ՀՀ-ում ստեղծված ինստիտուցիոնալ կառուցվածքները մեզ հնարավորություն են տալիս արդյունավետ կարգավորել ոչ միայն ՀՀ-ում, այլեւ Հայկական աշխարհում ձեւավորվող իրավահարաբերությունները։ Սա նույնպես ես արձանագրում եմ որպես օրակարգային հարց, որի պատասխանը նույնպես տրված չէ։ Թե ինչպես է տրվում այս հարցերի պատասխանը, կքննարկենք առանձին։ Այժմ ուզում եմ անդրադառնալ մեթոդաբանական հետեւյալ խնդրին՝ ո՞վ է այն սուբյեկտը, որը որոնում է այս հարցերի պատասխանը։ Խնդիրը կարող ենք դիտարկել հետազոտողի տեսակետից։ Աշխարհի տարբեր բեւեռներում գտնվող հայկական համայնքը ուղղակի կապված, փոխկապակցված է, եւ այդ կապերը գնալով ամրապնդվում են։ Եվ մեր ուսումնասիրած անձ-օբյեկտը շատ բարդ օբյեկտ է։ Ամեն անգամ ՀՀ օրակարգի հարց քննարկելիս մենք պետք է գիտակցենք, որ մեզ մտահոգող հարցը Ավստրալիայի հայկական համայնքի օրակարգում այլ ձեւակերպում է ստանալու, ԱՄՆ հայկական համայնքի օրակարգում՝ այլ եւ այլն։ Ուրեմն, բարդությունը ո՞րն է։ Եթե այսօր էլ հետեւենք մեր գոյաբանությանն ու դատողություններին, ապա կտարանջատենք, թե ինչ է խոսում ելույթ ունեցողը, երբ ասում է՝ սա կարեւոր հարց է։ Ո՞ւմ տեսակետից է կարեւոր եւ ո՞րն է օբյեկտը։ Գանք ցեղասպանության խնդրին, որը բուռն քննարկման առարկա է. ինչպիսի՞ն պետք է լինի պետության վերաբերմունքը ցեղասպանության նկատմամբ, ինչպիսի՞ն պետք է լինի ԱՄՆ-ում գործող լոբբիստական կազմակերպությունների վերաբերմունքը, կամ այն հայերի, ովքեր բնակվում են Հայկական աշխարհում, բայց երբեւիցե չեն եղել ՀՀ-ում եւ գուցե մինչեւ իրենց կյանքի վերջն էլ չեն լինի։ Սփյուռքահայերի 95 տոկոսը Հայաստանում չի եղել, եւ հասկանալի է, որ նրանց աշխարհընկալումը տարբերվում է մերինից։ Ուրեմն՝ սուբյեկտները տարբեր են, օբյեկտը, որի մասին խոսում ենք, նույնպես տարբեր է։ Միգուցե աշխարհում կան ազգեր, որոնք համանման վիճակում են, այսինքն՝ պետական սահմանում ապրող բնակչությունը երեք անգամ պակաս է, քան

արտասահմանում բնակվողը: Սա շատ հետաքրքիր ֆենոմեն է, որի ուսումնասիրությունը ինքներս պետք է կատարենք, որեւէ մեկը այն չի կարող մեզնից լավ անել, որովհետեւ դրա համար անհրաժեշտ են ոչ միայն գիտելիքներ, ոչ միայն տնտեսական պատրաստվածություն, ոչ միայն մեթոդաբանական ճշգրիտ ձեւակերպումներ, այլեւ հետազոտողի զգալու ունակությունը:

Ինչպե՞ս պետք է լուծենք այս խնդիրները: Նախ, մենք ունենք ազգային կյանքի ինքնակազմակերպման բազմաթիվ ձեւեր, եւ ամենևին էլ ակնհայտ չէ, որ ինքնակազմակերպման ամենաբարձր մակարդակը պետությունն է: Ես սա կասկածի տակ եմ դնում, եւ եթե մեր դասականներն անցյալ դարում այդ ձեւակերպման կողմնակից էին, ապա 21-րդ դարում մենք տեսնում ենք, որ ի հայտ են գալիս նոր միություններ, նոր միավորումներ, քաղաքակրթական մոտեցումներ, ինքնակազմակերպման այլ ձեւեր, որոնք գերիշխող են դառնում: Ակնհայտ է, որ 21-րդ դարը ոչ թե պետությունների, այլ քաղաքակրթությունների մրցակցության դար է: Ուստի մեր առջեւ ծառանում է այն հարցը, թե մերօրյա երեւույթները ի՞նչ տեսք են ստանալու ապագայում՝ ազգի առանցքը կազմող պետությո՞ւն են լինելու եւ եթե այո, ապա ի՞նչ ապագա են ունենալու: Շատերն այսօր պնդում են, որ մենք պետք է դառնանք Եվրամիության անդամ՝ չնայած պետականորեն այդպիսի նպատակ չենք հայտարարել, թե՞ մեր ճանապարհը տանում է «Եվրազես», որովհետեւ, գիտեք, ինտեգրման նոր գործընթացներ են ծավալվում Եվրազեսի շրջանակում, կամ մենք ավելի շատ ասիակա՞ն երկիր ենք, թե՞ պետք է հավակնություն ունենանք ինքուրույն գոյատեւելու, իբրեւ լոկալ քաղաքակրթություն՝ բացահայտելով հիմնարար առանձնահատկություններ, հռչակելով, որ մենք ուզում ենք դրանք պահպանել երկար ժամանակ, որովհետեւ 21-րդ դարում մեր առանձնահատկությունները մեզ հարաբերական առավելություն են տալու քաղաքակրթությունների մրցակցային դաշտում:

ՀՀ-ում, բնակչության թվի համեմատ, չափազանց մեծ է սպանությունների թիվը, մանավանդ շատ են քաղաքական սպանությունները: Գրողների միության նախագահ, ԱԺ նախագահ, վարչապետ, ԱԺ նախագահի տեղակալ, փոխվարչապետ, նախարարներ, քաղաքապետ եւ այլն: Սա լուրջ խնդիր է, որը նաեւ սոցիոլոգիական հետազոտության կարիք ունի: Թվում է, թե պատճառը անհանդուրժողականության մթնոլորտն է, երբ մարդիկ, չգտնելով խնդիրների լուծման եղանակ, կարծում են, որ եթե վերացնեն այս կամ այն պաշտոնյային, ապա այն կլուծվի: Իրականում, իհարկե, դա ընդամենը վրեժխնդրություն է: Նշանակում է, որ հասարակությունը դեռեւս չի ստեղծել համերաշխության, հանդուրժողության մթնոլորտ ձեւավորող մեխանիզմներ: Եվս մի հանգամանք, որը, կարծում եմ, լուրջ ուսումնասիրության թեմա պետք է դառնա մեր սոցիոլոգների համար. մեր երկիրը աշխարհի ամենամոնոէթնիկ երկրներից է, որի բնակչության 98 տոկոսը հայեր են, եւ սա նույնպես ստեղծում է մեր հասարակական կյանքի կազմակերպման առանձնահատկություններ: Ի՞նչ պատասխան են

ստանալու այս հարցերը եւ ո՞րն է լինելու այն պլատֆորմը, որի շուրջ հնարավոր է ձեւավորել ընդունելի լուծումներ։ Կարծում եմ, որ լավագույն ձեւը բաց երկխոսությունն է, որին պետք է մասնակցեն մեզ հետաքրքրող օբյեկտի բոլոր կարող ուժերը։ Եթե մենք ստեղծենք այդ դաշտը, ապա երկխոսությունը կարող է լինել, ընդ որում՝ տարբեր մակարդակներով՝ քաղաքական բանավեճ, մասնագիտական քննարկում՝ ինչպես այստեղ՝ մեր լսարանում։ Երկխոսության, համերաշխության, հանդուրժողականության այդ պլատֆորմը մենք պետք է ստեղծենք, որպեսզի մարդիկ կարողանան լսել այլ կարծիք, համակերպվել այն մտքի հետ, որ այդ կարծիքը գոյություն է ունենալու, մանավանդ 21-րդ դարում, երբ ամեն բան շատ արագ է փոխվում, հիպոթեզները պետք է ավելի շատ լինեն։ Երկխոսության այդ պլատֆորմի խնդիրը, կարծում եմ, մեզ համար պետք է լինի առանձին քննարկման առարկա, որպեսզի մեր Հայկական աշխարհի կարող ուժերը համախմբենք եւ ստանանք առավելագույն արդյունք։ Իսկ առավելագույն արդյունքը կլինի այն, որ երկխոսության շնորհիվ Հայկական աշխարհում ստեղծվի համապատասխան մթնոլորտ եւ Հայկական աշխարհն իր բազմազանությամբ ուժեղանա։ Իմ կարծիքով 21-րդ դարը բազմազանության դար է։ Անցած դարավերջին շատերը ոգեւորված էին գլոբալացմամբ, խոսում էին ունիֆիկացիայի, միասնական ստանդարտների եւ ամբողջ աշխարհում հաստատվող միեւնույն կանոնների մասին։ Բայց ես առաջ եմ քաշում մեկ այլ վարկած՝ 21-րդ դարը յուրահատկությունների դարաշրջան է լինելու, որի հենքային գործընթացը մտագործունեությունն է եւ դրա հիմնական կրողը մտածող մարդը, որի համար ամենակարեւորը ինքնահիրացումն է, ինչը նրա բուն յուրօրինակությունն է։ Դա է 21-րդ դարի հարստությունը։ Եվ այդ յուրօրինակ մտածողությունը եւ այդ դաշտի ստեղծումը վկայում են, որ 21-րդ դարը բազմազանության դար պետք է լինի, այլ ոչ թե թվացյալ միասնական ստանդարտների դար։ Եվ Հայկական աշխարհում մեր ձեւավորելիք պլատֆորմը հետապնդելու է այդ նույն նպատակը՝ մտածողության դաշտում միավորել բազմազան, տարբեր մտածողություն ունեցող, տաղանդաշատ հայերին։

Շնորհակալություն ուշադրության համար։